

ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N «ՀՀ ԼՄՎՔ ՄԱԾՁԲ-21/48»

ք. Վանաձոր

«02» 04 2021թ.

«Վանաձորի համայնքապետարան»-ը, ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԱԼԼԵՐԻՆԻ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Արման Հարությունյան-ի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 38870000 (երեսունութ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:<sup>17</sup>

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1<sup>18</sup>

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:<sup>19</sup>

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>20</sup> Ընդ որում տուգանքը

<sup>16</sup> Հանվում է պայմանագրից, եթե մատուցվելիք ծառայությունը չի վերաբերում շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի քաղաքաշինական փորձաքննության իրականացմանը:

<sup>17</sup> Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

<sup>18</sup> Կատարողը կարող է իրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

<sup>19</sup> Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը կնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

<sup>20</sup> Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

<sup>21</sup> Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 <sup>22</sup>

7.7 <sup>23</sup>

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 <sup>24</sup>

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<sup>22</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

<sup>23</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համարվող գործունեության (կոնտրոլի) պայմանագիր

կնքելու միջոցով:

<sup>24</sup> Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տրամաբան ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ  
Վանաձորի համայնքապետարան  
ք. Վանաձոր Տիգրան Մեծի 22  
Կենտրոնական գանձապետարան  
Հ/Հ 900232547027  
ՀՎՀՀ 06901936

  
Մ. Ասլանյան  
(ստորագրություն)  
Կ.Տ.  


Կ Ա Տ Ա Ր Ո Ղ  
«ԲԱԼԼԵՐԻՆԻ» ՍՊԸ  
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 34/38  
«Էվոկաբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 1660013163470100  
ՀՎՀՀ 06957824

  
Ա. Հարությունյան  
(ստորագրություն)  
Կ.Տ.  


Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

Ծառայության						ՀՀ դրամ	
հրավերով նախատեսված ճշտագրման համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	79951110/	Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայություններ տես ներթևու	դրամ	38870000	1	Համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ	պայմանագրի կնքման պահից մինչև 31.12.2021թ

\* Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել փնել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:  
 \*\* Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ**

h/h	ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ
1.	Համայնքապետարանի ենթակայության երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի դպրոցների աշխատանքների համակարգում և վերահսկում	տարվա ընթացքում
2.	Համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզների աշխատանքների համակարգում և վերահսկում	տարվա ընթացքում
3.	Համայնքապետարանի ենթակայության գրադարանային համակարգի, թանգարանների աշխատանքների համակարգում և վերահսկում	տարվա ընթացքում
4.	Համայնքապետարանի ենթակայության մշակույթի տների, գեղարվեստական կատարողական համույթների թատրոնների աշխատանքների համակարգում և վերահսկում	տարվա ընթացքում

**Պետական, ազգային տոներին, հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ**

			Հազար դրամ
1.	Ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված միջոցառումների շարք	տարվա ընթացքում	530,0
2.	Մայրության և գեղեցկության տոն	7 ապրիլի	827,0
3.	Սուրբ Զատիկի տոնին նվիրված միջոցառում	ապրիլ	3221,0
4.	Յեղասպանության զոհերի հիշատակի օրվան նվիրված միջոցառումների շարք	24 ապրիլի	200,0
5.	Երկրապահի օր	8 մայիսի	730,0

6.	Հաղթանակի և խաղաղության տոն	9 մայիսի	2790,0
8.	Հանրապետության օր	մայիսի 28	680,0
9.	Երեխաների իրավունքների պաշպանության օր	1 հունիսի	1250,0
10.	Սահմանադրության օր	5 հուլիսի	550,0
11.	Անկախության տոն	21 սեպտեմբերի	1290,0
13.	Երկրաշարժի զոհերի հիշատակման օր	7 դեկտեմբերի	100,0
14.	Ծննդյան տոներ և Ամանոր	Դեկտեմբեր-հունվար	8140,0

**ընդամենը 20308,0 հազար դրամ**  
**Համաքաղաքային միջոցառումներ**

1.	«Ծաղկի տոն» համաքաղաքային տոնախմբություն	Ապրիլ - օգոստոս	750,0
3.	«Կոմիտաս» պատանի երաժիշտ-կատարողների մրցույթ-փառատոն	հունիսի	850,0
5.	«Երգի տոն» համաքաղաքային տոնախմբություն	Հուլիս-հոկտեմբեր	1040,0
7.	«Վանաձորի օր» համաքաղաքային տոնախմբություն	հոկտեմբեր	10686,0
8.	Կամերային երգչախմբի և Կամերային նվագախմբի համերգները նվիրված «Վանաձորի օր» տոնախմբություն	սեպտեմբերի-հոկտեմբերի	354,0
9.	«Հորովել» երգի-պարի համույթի համերգը նվիրված «Վանաձորի օր» տոնակատարությանը	սեպտեմբերի-հոկտեմբերի	500,0
10.	«Գրական օր» նվիրված «Վանաձորի օր» տոնակատարությանը	սեպտեմբերի-հոկտեմբերի	321,0
11.	«Թատերական օր» նվիրված «Վանաձորի օր» տոնակատարությանը	սեպտեմբերի-հոկտեմբերի	600,0
12.	Վանաձորի գեղանկարիչների գեղանկարչական, դեկորատիվ կիրառական արվեստի աշխատանքների ցուցահանդեսներ	Տարվա ընթացքում	350,0
13.	Հրավերով Վանաձոր ժամանած պատվիրակությունների պատվին մշակութային միջոցառումների կազմակերպում	Տարվա ընթացքում	400,0
14.	Անվանի մարդկանց հորեյանական տոների, մեծարման երեկոների, շնորհանդեսների կազմակերպում	Տարվա ընթացքում	590,0

**դրամ** **ընդամենը՝ 16441,0 հազար**

**Միջհամայնքային մշակութային կապերի ամրապնդմանը նպաստող միջոցառումներ**

1.	«Վանաձոր - Գյումրի» մշակութային օր	Տարվա ընթացքում	430,0
2.	«Վանաձոր - Ստեփանավան» մշակութային օր	Տարվա ընթացքում	310,0
3.	«Վանաձոր - Ալավերդի» մշակութային օր	Տարվա ընթացքում	325,0
4.	«Վանաձոր - Սպիտակ» մշակութային օր	Տարվա ընթացքում	255,0

**ընդամենը՝ 1320,0 հազար դրամ**

**Նախադպրոցական համակարգի աշխարանքների բարելավմանը նպաստող միջոցառումներ**

3.	«Հրաժեշտ մանկապարտեզին» միջոցառումների	1 հունիսի-	801,0
----	--	------------	-------

**Հազար դրամ**

	շարք	31 օգոստոսի	
4.	Պարբերական այցելությունների հիմնարկներ	յուրաքանչյուր ամիս	-

**Ընդամենը՝ 801,0 հազար դրամ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝ 38870,0 հազար դրամ**

**ԾՐԱԳԻՐ**

**Վանաձորի գեղանկարիչների գեղանկարչական, դեկորատիվ-կիրառական արվեստի աշխատանքների ցուցահանդեսի կազմակերպման**

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով քաղաքի ազգաբնակչությանը տեղեկացնել կազմակերպվող ցուցահանդեսի մասին /թեմատիկ գովազդային հոլովակ 30-50 վրկ տևողությամբ/:
2. Ձեռք բերել 300 հատ /7x21սմ չափի, 300 գր. ձևավոր թղթից/ գունավոր սուպազրության հրավիրատոմս և բաժանել արվեստասերներին:
3. Կերպարվեստի թանգարանում կազմակերպել հյուրասիրություն /ֆուրշետ/: Ձեռք բերել 5 տարվա հնեցման 3 հատ հայկական կոնյակ, 3 հատ հայկական կիսաքաղցր գինի, հայկական արտադրության կիսաչոր շամպայն, 3 տուփ շոկոլադե կոնֆետների հավաքածու, 30 կտոր թխվածք և միրգ /բանան, անանաս, ելակ, նարինջ, թուրինջ, կիվի, տանձ, խնձոր/ 5 հատ 1 լ. բնական հյութ, 6 հատ 0,5 լ հանքային ջուր և 2 տուփ երկշերտ անձեռոցիկ:
4. Ձեռք բերել 45 հատ վարդ /60-70 սմ երկարությամբ, գլխի տրամագիծը 5-6 սմ/ կին նկարիչների համար:
5. Պատրաստել 20 հատ շնորհակալագրեր /A 4 չափի, ձևավոր թղթի վրա սուպազրած/ ցուցահանդեսի մասնակից նկարիչների համար:
6. Լրատվամիջոցներով լուսարանել ցուցահանդեսը:

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**Վանաձորի գեղանկարիչների գեղանկարչական, դեկորատիվ-կիրառական արվեստի աշխատանքների ցուցահանդեսների կազմակերպման**

1. Հրավիրատոմս 7x21սմ չափի	300 հատ	-	90.0 հազ. դրամ
2. Վարդ	45 հատ	-	45.0 հազ. դրամ
3. Շնորհակալագրեր	20 հատ	-	20.0 հազ. դրամ
4. Հյուրասիրություն (ֆուրշետ)		-	95.0 հազ. դրամ
Գինի	3 հատ	-	9.0 հազ. դրամ
Կոնյակ	3 հատ	-	27.0 հազ. դրամ
Շամպայն	3 հատ	-	6.0 հազ. դրամ
Թխվածք	30 կտոր	-	9.0 հազ. դրամ
Շոկոլադե կոնֆետների հավաքածու	3 տուփ	-	15.0 հազ. դրամ
Խնձոր	3 կգ	-	1.5 հազ. դրամ
Բանան	3 կգ	-	2.4 հազ. դրամ
Անանաս	2 հատ	-	10.0 հազ. դրամ
Տանձ	2 կգ	-	1.5 հազ. դրամ

Ելակ	2 կգ	-	1.9 հազ. դրամ
Նարինջ	2 կգ	-	1.4 հազ. դրամ
Թուրինջ	2 կգ	-	2.0 հազ. դրամ
Կիվի	2 կգ	-	2.0 հազ. դրամ
Բնական հյութ 1լ.	5 հատ	-	4.5 հազ. դրամ
Հանքային ջուր	6 հատ	-	1.2 հազ. դրամ
Անձեռոցիկ	2 տուփ	-	0,6 հազ. դրամ
Թեմատիկ գովազդային հոլովակ		-	100.0 հազ. դրամ

**Ընդամենը՝ 350.0 հազար դրամ**

**ԾՐԱԳԻՐ**

**Պատանի երաժիշտ-կատարողների «Կոմիտաս»**

**մրցույթ-փառատոնի կազմակերպման**

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով ազգաբնակչությանը տեղեկացնել մրցույթի անցկացման մասին /թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50 վրկ. տևողությամբ/:
2. Ձեռք բերել 80 պատվոգիր /A 4 չափի, ձևավաճող թղթի վրա տպագրված/ դաշնամուրային, լարային, փողային, ժող գործիքների, երգեցողության և երգչախմբային բաժինների 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի մրցանակի արժանացածներին, ակտիվ մասնակցություն ունեցած դպրոցներին և մասնակիցներին պարգևատրելու համար:
3. Ձեռք բերել փայտե և փայտային հիմքով գիպսե դիմաքանդակով մրցանակներ 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի մրցանակի արժանացածներին պարգևատրելու համար: Յուրաքանչյուր կարգի մրցանակից անհրաժեշտ է 12 հատ, ընդհանուր 36 մրցանակ: 1-ին տեղ զբաղված մասնակիցներին նվիրել 30սմ բարձրությամբ և 20 սմ լայնությամբ կաղնու փայտի հիմքի վրա պատրաստված և 5 սմ խորությամբ Կոմիտասի գիպսե դիմաքանդակով մրցանակ, 2-րդ տեղ – 23-24 սմ բարձրությամբ, 8-10 սմ լայնությամբ նոտայի տեսք ունեցող և 3-րդ տեղի համար 17-18սմ բարձրությամբ, 7-8 սմ լայնությամբ Կոմիտասի դիմաքանդակով կաղնու փայտից պատրաստված մրցանակ:
4. Ապահովել բաժնի կողմից հաստատված փառատոնի կանոնադրության առկայությունը և ժյուրիի ներկայությունը: Մրցանակակիրներին, նրանց դասատուներին և 5 հաղորդավարի պարգևատրելու համար ձեռք բերել 50 հատ ծաղկեփունջ /պատրաստված գերբերաններից և կանաչ տերևներից/:
5. Ապահովել հաղորդավարի ներկայությունը առաջին օրվա բացման, և երկրորդ օրվա փակման միջոցառումներին, հաղորդավարի թեկնածությունը համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
6. Հանձնաժողովի անդամներին ապահովել անհատական թղթապանակներով, գրիչներով և նոթատետրերով 35 կոմպլեկտ:
7. Ձեռք բերել դիզայների կողմից պատրաստված, փառատոնի լոգոյով 2 պաստառ /1x2 մ. Չափի, գունավոր տպագրության/ և դրանց համար նախատեսված պատվանդան (ռուպի) փառատոնի օրերին մրցույթի վայրի մուտքի մոտ և բեմահարթակի վրա տեղադրելու

- համար: Պաստառի արտաքին տեսքը և բովանդակությունը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
8. Բեմի ձևավորման համար ձեռք բերել 4 ծաղկեփունջ /պատրաստված վարդերից, գերբերաներից և կանաչ տերևներից/:
9. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:

### ՆԱԽԱՀԱՇԻՎ

#### Պատանի երաժիշտ-կատարողների «Կոմիտաս»

#### մրցույթ-փառատոնի կազմակերպման

1. Մրցանակ	36 հատ - 216.0 հազ. դրամ
1-ին տեղ	12 հատ - 96,0 հազ. դրամ
2-րդ տեղ	12 հատ - 72,0 հազ. դրամ
3-րդ տեղ	12 հատ - 48,0 հազ. դրամ
2. Պատվոգիր	80 հատ - 80.0 հազ. դրամ
3. Ծաղկեփունջ	50 հատ - 200.0 հազ. դրամ
4. Մրցույթի լոգոյով պաստառ 1,6մ. x 2մ. չափսի	2 հատ - 23.0 հազ. դրամ
5. Լոգոյով պաստառի պատվանդան (ռուլափ)	2 հատ - 40.0 հազ. դրամ
6. Հաղորդավար	1 անձ - 30.0 հազ. դրամ
7. Թղթապանակ, գրիչ և նոթատետր 35 կոմպ.	- 91.0 հազ. դրամ
	Թղթապանակ 35 հատ-52,5 հազ դրամ
	Գրիչ 35 հատ-10,5 հազ դրամ
	Նոթատետր 35 հատ-28,0 հազ դրամ
8. Ծաղկեփունջ բեմի ձևավորման համար	4 հատ - 20.0 հազ. դրամ
9. Դիզայներ, պաստառի և տպագրության համար	- 50.0 հազ. դրամ
10. Թեմատիկ գովազդային հոլովակ	- 100.0 հազ. դրամ

Ընդամենը՝ **850.0 հազ. դրամ**

### ԾՐԱԳԻՐ

#### «Երգի տոն» համաքաղաքային համերգ-միջոցառման կազմակերպման

- Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով քաղաքի ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող համերգ-միջոցառման մասին/թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50վրկ. տևողությամբ/:
- Վարձակալել ձայնային տեխնիկա /10-11 ԿՎ հզորությամբ/
- Միջոցառման անցկացման վայրը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ /Թեժ լեռ, «Բոլոր քար»/

4. Վարձակալել 1 միկրոբեռնատար /1-2 տ տարողությամբ /, վարձել 3 բանվոր:
5. Ապահովել օպերատորի և հաղորդավարների ներկայությունը, նրանց թեկնածությունը նախապես համաձայնեցնելով Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
6. Վարձակալել շարժական բեմահարթակ /8x6 մ, 1 մետր բարձրությամբ/:
7. Կազմել երկժամ համերգային ծրագիր քաղաքի գեղարվեստական խմբերի և անհատ կատարողների մասնակցությամբ, միջոցառման ծրագիրն ու վայրը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
8. Բեմահարթակն ու հարակից տարածքները ձևավորելու նպատակով ձեռք բերել լայնաֆորմատ տպագրության պաստառներ /27,8մք/ ` տոնի համար նախապես ընտրված երգերի տեքստերով, դրանք փակցնել միջոցառման վայրում:
9. Վարձակալել 4 ավտոբուս /22 տեղ/
10. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:

### ՆԱԽԱՀԱՇԻՎ

1. Լայնաֆորմատ տպագրություն	27,8մ <sup>2</sup>	-	100.0 հազ. դրամ
2. Օպերատորի վարձավճար		-	20.0 հազ.դրամ
3. Հաղորդավարների վարձավճար	2 մարդ	-	60.0 հազ. դրամ
4. Բանվորի վարձավճար	3 մարդ	-	60.0 հազ. դրամ
5. Չայնային տեխնիկայի վարձակալություն	10-11 ԿՎ.հզ	-	60.0 հազ. դրամ
6. Շարժական բեմահարթակ 8x6մ. , 1մ. բարձրությամբ		-	500.0 հազ. դրամ
7. Սցենար		-	50.0 հազ դրամ
8. Թեմատիկ գովազդային հոլովակ		-	100.0 հազ. դրամ
9. Միկրոբեռնատար 1 երթ		-	30.0 հազ. դրամ
10. Ավտոբուս	4 հատ	-	60.0 հազ. դրամ

Ընդամենը` 1040.0 հազար դրամ

### ԾՐԱԳԻՐ

«Վանաձորի օր» համաքաղաքային տոնակատարության կազմակերպման

1. Լրատվամիջոցների և կայքերի միջոցով ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող միջոցառման մասին /թեմատիկ գովազդային հոլովակ` 30-50 վրկ. տևողությամբ/ 3 հատ:
2. Ձեռք բերել 400 հատ, 300 գր. ,21սմ x 21սմ ձևավոր, գունավոր տպագրության` տոնը խորհրդանշող հրավիրատոմս և 400 հատ ծրար` հանրապետության մի շարք համայնքների ղեկավարներին, գերատեսչություններին, ուսումնական հաստատություններին, հասարակական կազմակերպություններին, պատվավոր քաղաքացիներին, հանրապետության այլ համայնքներում ապրող նշանավոր վանաձորցիներին և այլ պաշտոնյաներին հրավիրելու համար, ցանկը նախապես համաձայնեցնելով Վանաձորի համայնքապետարանի մշակույթի, կրթության և զբոսաշրջության հարցերի բաժնի հետ: Կազմակերպել առաքումը:

3. Քաղաքը տոնական տեսքի բերելու նպատակով ձեռք բերել քաղաքի տոնի խորհրդանշանով ձևավորված 100 սպիտակ կտորից և 100 ՀՀ պետական /1մ\*1,5մ չափի/ դրոշ:
4. 2 հատ քաղաքի տոնի կարգախոսով գրությամբ /8 մ x 0.6 մ/ լայնաֆորմատ տպագրության պատասխան կախել քաղաքի մուտքերի մոտ՝ Երևանյան խճուղու և Շիրակի պողոտայի սկզբնամասերում: Պատրաստել դեկորացիաներ քաղաքի գլխավոր պողոտայում և Հայքի հրապարակում տեղադրելու համար: Տոնական ձևավորման աշխատանքները կատարելու համար վարձակալել 5 օրով 1ավտոաշտարակ ( 15-17մ սանդուղքով):
5. Անցկացնել միջոցառումների շարք քաղաքի տարբեր հատվածներում, միջոցառման վայրերը և գեղարվեստական ծրագրերը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի մշակույթի, կրթության և զբոսաշրջության հարցերի բաժնի հետ:
6. Տոնի անցկացման համար ընտրել օրվա կարգախոս, պատրաստել կարգախոսը ներառող նշան, որը պետք է լինի տոնի հետ կապված բոլոր տպագրական նյութերում և պատասխաններում, բացառությամբ հրավիրատոմսի:
7. Վարձակալել մեկ միկրոբեռնատար ավտոմեքենա 1-2 տ. տարողությամբ՝ քաղաքի թվով 5 այգիներում (այգիների ընտրությունը համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի մշակույթի, կրթության և զբոսաշրջության հարցերի բաժնի հետ) ժամը 11-ից կազմակերպվող ցուցահանդեսների, դեկորացիաների, ստենդների, մուրերտների, ռադիոսարքավորումների և այլ անհրաժեշտ պարագաների տեղափոխումը կազմակերպելու և միջոցառումից հետո հետ տանելու համար:
8. Կազմակերպել քաղաքի գեղանկարիչների, անհատ ստեղծագործողների ստեղծագործությունների, դեկորատիվ – կիրառական արվեստի աշխատանքների ցուցահանդեսներ:
9. Նախապես հաստատված ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումների վայրերում ապահովել ձայնային տեխնիկա 10-11 ԿՎ հզորության և տիսնիկական օպերատորների ներկայություն 5 անձ (դինամիկ, միկրոֆոն և երաժշտական կատարումների համար նախատեսված այլ միջոցներ):
10. Նախատեսված բոլոր միջոցառումների անցկացման համար ապահովել 2 հաղորդավարների և ձայնային և լուսային օպերատորների ներկայությունը: Միջոցառումներից մեկում ապահովել Գուգարաց թեմի «Վարդանանց հետնորդներ» փողային նվագախմբի մասնակցությունը, որի համար վարձակալել 25 նստատեղով երեք ավտոբուս՝ նվագախմբին հրապարակ բերելու և հետ տանելու համար:
11. Միջոցառումների շարքը սկսել հանդիսավոր մասով, որտեղ կլինեն շնորհավորանքի ուղերձներ, այնուհետև ըստ նախատեսված վայրերի անցկացնել թեմատիկ այլ միջոցառումներ: Երեկոյան ժամը 18-22-ը համերգի համար կազմել տոնական ծրագիր հրավիրված 3 էստրադային արտիստների, Վանաձորի գեղարվեստական համույթների և անհատ կատարողների մասնակցությամբ: Հրավիրել հաղորդավար 2 հոգի, լուսային ու ձայնային օպերատորներ, նրանց թեկնածությունը նախապես համաձայնեցնելով Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ: Երեկոյան համերգի համար վարձակալել լուսաձայնային տեխնիկա /ձայնային 40 ԿՎ հզորությամբ, լուսային 40 հատ բեմական լուսարձակ/ և շարժական բեմահարթակ 10x10մ չափի, 1 մետր բարձրությամբ, ծածկով/:
12. Վանաձոր ժամանած հյուրերի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ձեռք բերել սննդամթերք հյուրասիրության համար /5 տարվա հնեցման 5 հատ հայկական կոնյակ, 5

հատ հայկական կիսաքաղցր գինի, 5 տուփ շոկոլադե կոնֆետների հավաքածու, 50 կտոր թխվածք, 15 հատ 1լ. բնական հյութ, 15 հատ 0.5լ գազավորված ըմպելիք, 3 տուփ սև սուրճ, 40 տուփ լուծվող սուրճ, 10 տուփ երկշերտ անձեռոցիկ, միրգ /անանաս, բանան, կիվի, նարինջ, թուրինջ, ելակ, խնձոր, տանձ, խաղող/:

13. Կազմակերպել հատուկ հյուրերի հյուրասիրությունը 3 տաք ուտեստով 80 անձի համար, Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող ռեստորաններից մեկում և գիշերակացը 40 անձի համար Վանաձոր համայնքի վարչական տարածքում գործող հյուրանոցներից մեկում: Հյուրասիրության և գիշերակացի վայրը նախապես համաձայնեցնել վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
14. Կազմակերպել դրոշների և կարգախոսների ապամոնտաժումը, հաշվառումը և պահեստավորումը: Տոնական ձևավորման հավաքման աշխատանքները կատարելու համար վարձակալել 2 օրով 1 ավտոաշտարակ /15 x 17մ սանդուղքով/:
15. «Վանաձորի օր» տոնախմբության շրջանակներում անհրաժեշտ աշխատանքներ կատարելու համար հրավիրել օրավարձով աշխատող բանվորներ 6 մարդ:
16. Նախապես պատվիրել և ձեռք բերել / 3 արկղ- 1 դյույմ, 4արկղ- 2.5դյույմ, 4 արկղ - 2 դյույմ / հրավառության ձողիկներ՝ Հայքի հրապարակում երեկոյան համերգից հետո՝ ժամը 22-ին նախատեսված տոնական հրավառության համար:
17. Քաղաքը տոնական տեսքի բերելու համար պատվիրել դիզայների կողմից պատրաստված լայնաֆորմատ տպագրության պաստառներ 190,4 ք.մ, դրանցով դեկորներ պատրաստելու համար:
18. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

«Վանաձորի օր» համաքաղաքային տոնակատարության կազմակերպման

1. Հրավեր /քաղաքի տոնի /	400 հատ	- 320.0 հազ. դրամ
2. Ծրար	400 հատ	- 20.0 հազ. դրամ
3. Դրոշ /սպիտակ 1 x 0.5 չափի /	100 հատ	- 260.0 հազ. դրամ
4. ՀՀ պետ. դրոշ / 1մ*1,5մ չափի/	100 հատ	- 260.0 հազ. դրամ
5. Ծածկով շարժական բեմահարթակի /10x11մ. չափի և 1,5մ. բարձրությամբ/	1 հատ	- 1.500.0 հազ. դրամ
6. Չայնային տեխնիկայի /40 ԿՎ հզ./		- 500.0 հազ. դրամ
7. Բեմական լույսերի վարձակալություն		- 500.0 հազ. դրամ
8. Հրավառություն 1 դյույմ	3 արկղ	- 210.0 հազ. դրամ
9. Հրավառություն 2.5 դյույմ	3 արկղ	- 390.0 հազ. դրամ
10. Հրավառություն 2 դյույմ	3 արկղ	- 300.0 հազ. դրամ
11. Հրավառություն 2 դյույմ	1 արկղ	- 90.0 հազ. դրամ
12. Հրավառություն 4 դյույմ	1 արկղ	- 150.0 հազ. դրամ
13. Ավտոբուսի վարձակալություն (փող. նվազախմբին միջոցառման վայր բերելու և հետ տանելու համար և Հայքի հրապարակում գլխավոր համերգի մասնակիցներին որպես հանդերձարան օգտագործելու համար)	3 ավտ.	- 45.0 հազ. դրամ
14. Բանվորների վարձավճար 2-3 օր	6 մարդ	- 300.0 հազ. դրամ
15. Հաղորդավարի վարձավճար	2 մարդ	- 200.0 հազ. դրամ
16. Չայնային օպերատորի վարձավճար		- 50.0 հազ. դրամ
17. Լուսային օպերատորի վարձավճար		- 30.0 հազ. դրամ
18. Ավտոաշտարակի վարձավճար 7 օր	1 մեք.	- 175.0 հազ. դրամ

19. Միկրոբեռնատարի վարձակալություն	6 երթ	- 180.0 հազ. դրամ
20. Հյուրասիրություն Վանաձորի քաղաքապետարանում 50 անձի համար		
Կոնյակ 5 հատ	- 27,5 հազ. դրամ	
Գինի 5 հատ	- 11.0 հազ. դրամ	
Շոկոլադե կոնֆետների հավաքածու 5 հատ	- 25.0 հազ. Դրամ	
Թխվածք 50 կտոր	- 15.0 հազ. դրամ	
Բնական հյութ - 15 հատ	- 13.5 հազ. դրամ	
Գազավորված ընկելիք (0,5 լ.) 15 հատ	- 3.0. հազ. Դրամ	
Սուրճ 3 տուփ	- 1.2 հազ. դրամ	
Լուծվող սուրճ 40 հատ	- 4.0 հազ. Դրամ	
Անձեռոցիկ 10 տուփ	- 3.0 հազ. դրամ	
Անանաս 5 հատ	- 25.0 հազ. դրամ	
Բանան 5 կգ.	- 4.0 հազ. դրամ	
Կիվի 3 կգ.	- 3.0 հազ. դրամ	
Նարինջ 6 հատ	- 4.2 հազ. դրամ	
Թուրինջ 3 հատ	- 3.0 հազ. Դրամ	
Ելակ 4 կգ.	- 3.8 հազ. դրամ	
Խնձոր 4 կգ.	- 2,0 հազ. դրամ	
Տանձ 4 կգ.	- 3.0 հազ. դրամ	
Խաղող 4 կգ.	- 2.2 հազ. Դրամ	
	Ընդհանուր	- 153.0 հազ.դրամ

21. Հատուկ հյուրերի համար հյուրասիրության կազմակերպում	-	800.0 հազ. դրամ
22. Գիշերակաց հյուրանոցում	-	1400.0 հազ. դրամ
23. Երգիչների վարձավճար	-	1000.0 հազ. դրամ
24. Ձայնային տեխնիկայի վարձակալություն /10 ԿՎ / այլ վայրերում միջոցառումների համար/	5 տեղ	- 300.0 հազ. դրամ
25. Տեխնիկական օպերատոր	5 անձ	- 150.0 հազ. դրամ
26. Լայնաֆորմատ տպագրություն	200 մ <sup>2</sup>	- 720.0 հազ. դրամ
27. Դեկորների պատրաստում	-	323.0 հազ. դրամ
28. Թեմատիկ գովազդային հոլովակ	3 հատ	- 300.0 հազ. Դրամ
29. Նկարահանող օպերատորներ	2 մարդ-	60,0 հազ դրամ

**ԸՆԴԱՄԵՆՆՆ՝ 10686.0 հազար դրամ**

**ԾՐԱԳԻՐ**

**«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված**

**Կամերային երգչախմբի և Կամերային նվագախմբի համերգների կազմակերպման**

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող համերգների մասին /թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50 վրկ. տևողությամբ/:
2. Կամերային նվագախմբի համերգը կազմակերպել ՀՈԱԿ-ներից մեկի դահլիճում, վայրը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի

հետ: Այդ նպատակով ձեռք բերել և բաշխել դիզայների կողմից պատրաստված 300 հատ / 7x21սմ չափի, 300 գր. կավճապատ թղթով ձևավոր/ հրավիրատոմս:

3. Կամերային երգչախմբի համերգը կազմակերպել Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցում, որի համար ձեռք բերել և բաշխել դիզայների կողմից պատրաստված 300 հատ /7x21սմ չափի, 300 գր. կավճապատ թղթով ձևավոր / հրավիրատոմս:
4. Բեմերի ձևավորման համար ձեռք բերել 6 ծաղկեզամբյուղ / պատրաստված գերբերաններից գլխիկի տրամագիծը 5-6 սմ. և կանաչ տրեններից/ յուրաքանչյուր համերգին 3 հատ: Ծաղկեփնջերը համերգների վերջում նվիրել խմբերի ղեկավարներին և հաղորդավարուհիներին:
5. Ձեռք բերել 2 շնորհակալագիր A4 չափի կավճապատ ձևավոր թղթի վրա կուլեկտիվներին հանձնելու համար:
6. Լրատվամիջոցներով լուսաբանել համերգները:

### ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված

Կամերային երգչախմբի և Կամերային նվագախմբի համերգների կազմակերպման

1. Հրավիրատոմս կամ. երգչախմբի 7x21 սմ	300 հատ -	90.0 հազ. դրամ
2. Հրավիրատոմս կամ. նվագախմբի 7x21 սմ	300 հատ -	90.0 հազ. դրամ
3. Շնորհակալագիր	2 հատ -	2.0 հազ. դրամ
4. Ծաղկե զամբյուղ բեմի համար	6 հատ -	22.0 հազ. դրամ
5. Դիզայներ	-	50.0 հազ. դրամ
6. Թեմատիկ գովազդային հոլովակ	-	100.0 հազ. դրամ

Ընդամենը՝ 354.0 հազար դրամ

### ԾՐԱԳԻՐ

«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված

Գրիգոր Հախինյանի անվան «Հորովել» երգի-պարի ժող. համույթի համերգի կազմակերպման

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող համերգի մասին /թեմատիկ գովազդային հոլովակ 30-50 վրկ. տևողությամբ/:

2. Գրիգոր Հախինյանի անվան «Հորովել» երգի-պարի ժող. համույթի համերգը կազմակերպել Շարլ Ազնավուրի անվան մշակույթի պալատում: Այդ նպատակով ձեռք բերել և բաշխել 500 հատ /7x21 չափի, 300 գր. ձևավոր թղթով/ հրավիրատոմս:
3. Ապահովել երկու հանդիսավարների ներկայությունը, նրանց թեկնածությունը նախապես համաձայնեցնելով Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
4. Բեմի ձևավորման համար ձեռք բերել 5 մ ծաղկեշղթա /պատրաստված գերբերաներից, գլխիկի տրամագիծը 5-6 սմ, և կանաչ տերևներից/ որոնք համերգի ավարտից հետո նվիրել, հաղորդավարուհուն, մեներգչուհիներին և երաժշտական մասի ղեկավարին:
5. Վարձակալել լուսաձայնային տեխնիկա /10-11 ԿՎ հզորությամբ/:
6. Լրատվամիջոցներով լուսաբանել համերգը:

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված  
«Հորովել» երգի-պարի համույթի համերգի կազմակերպման**

1. Հրավիրատոմս	500 հատ	-	150.0 հազ. դրամ
2. Ծաղկեզամբյուղ	5 հատ	-	40.0 հազ. դրամ
3. Լուսաձայնային տեխնիկա		-	100.0 հազ. դրամ
4. Հանդիսավար	2 անձ	-	60.0 հազ. դրամ
5. Բեմի ձևավորում 5մ ծաղկեշղթա		-	50.0 հազ. դրամ
6. Թեմատիկ գովազդային հոլովակ		-	100.0 հազ. դրամ
<b>Ընդամենը՝</b>			<b>500.0 հազար դրամ</b>

**ԾՐԱԳԻՐ**

**«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված  
«Գրական օր» գրական-երաժշտական ցերեկույթի կազմակերպման**

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող միջոցառման մասին /թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50 վրկ. տևողությամբ/:
2. Միջոցառումը կազմակերպել Ստեփան Ջորյանի տուն-թանգարանում:
3. Ձեռք բերել և բաշխել 150 հատ /7x21սմ չափի, 300 գր. ձևավոր թղթով / հրավիրատոմս:
4. Ստ. Ջորյանի տուն-թանգարանում հյուրասիրություն /ֆուրջետ/ կազմակերպելու համար ձեռք բերել հայկական արտադրության երկու հատ կիսաքաղցր գինի, երկու հատ 5 տարվա հնեցման հայկական կոնյակ, 25 կտոր թխվածք, 4 հատ 1լ. բնական հյութ, 2 տուփ շոկոլադե կոնֆետների համբածու, 6 հատ 0.5 լ. հանքային ջուր, միրգ /խնձոր, բանան, նարինջ/:

5. Ձեռք բերել 40 փաթեթավորված հոլանդական վարդ /60-70սմ. երկարությամբ և 5-6 սմ. գլխիկի տրամագծով/, 20 գիրք՝ քաղաքի կին գրողներին նվիրելու և 1 շնորհակալագիր՝ /A4 չափի, կավճապատ թղթի վրա տպագրված/ կոլեկտիվին հանձնելու համար:
6. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:

### ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված  
«Գրական օր» գրական-երաժշտական ցերեկույթի կազմակերպման

1. Հրավիրատոմս	150 հատ	-	45.0 հազ. դրամ
2. Շնորհակալագիր	1 հատ	-	1.0 հազ. դրամ
3. Վարդ (Հոլանդական փաթեթավորված)	40 հատ	-	40.0 հազ. դրամ
4. Հյուրասիրություն (ֆուրջետ)			
Գինի	2 հատ	-	4.4 հազ. դրամ
Կոնյակ	2 հատ	-	11.0 հազ. դրամ
Թխվածք	25 կտոր	-	5.0 հազ. դրամ
Խնձոր	2 կգ	-	1,0 հազ. դրամ
Բանան	2 կգ	-	1.6 հազ. դրամ
Բնական հյութ 1լ.	4 հատ	-	3,6 հազ. դրամ
Շոկոլադե կոնֆետների հավաքածու	2 տուփ	-	5.8 հազ. դրամ
Հանքային ջուր 0.5լ.	6 հատ	-	1,2 հազ. դրամ
Նարինջ	2 կգ	-	1.4 հազ. դրամ
5. Թեմատիկ գովազդային հոլովակ		-	100.0 հազ. դրամ
6. Գրքերի ձեռքբերում	20 հատ	-	100.0 հազ. դրամ
		Ընդամենը՝	321.0 հազ. դրամ

### ԾՐԱԳԻՐ

«Ծաղկի տոն» համաքաղաքային միջոցառման կազմակերպման

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով քաղաքի ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող միջոցառման մասին /թեմատիկ գովազդային հոլովակ՝ 30-50 վրկ. տևողությամբ/:
2. Միջոցառման վայրը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:

3. Միջոցառումն անցկացնելու համար ապահովել դեկորացիաների, մոլբերտների, ռադիոսարքավորումների տեղափոխումն ու տեղադրումը: Վարձել 1 բանվոր
4. Ապահովել օպերատորի և հաղորդավարի ներկայությունը: Նրանց թեկնածությունը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
5. Վարձակալել երաժշտական տեխնիկա /10-11 ԿՎ հզորությամբ/ և շարժական բեմահարթակ /8x6 մ. չափսի և 1մ. բարձրությամբ/:
6. Կազմել երկու ժամանոց համերգային ծրագիր քաղաքի գեղարվեստական խմբերի և անհատ կատարողների մասնակցությամբ:
7. Բեմահարթակն ու հարակից տարածքները ձևավորելու նպատակով ձեռք բերել 200 հատ ռետինե գունավոր փուչիկ:
11. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումը:

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**«Ծաղկի տոն» համաքաղաքային միջոցառման կազմակերպման**

1. Փուչիկ /տեղանքը գարդարելու համար/	200 հատ	-	20.0 հազ. դրամ
2. Օպերատորի վարձավճար		-	20.0 հազ.դրամ
3. Հաղորդավարի վարձավճար		-	30.0 հազ. դրամ
4. Բանվորի վարձավճար	1 մարդ	-	20.0 հազ. դրամ
5. Չայնային տեխնիկայի վարձակալություն	10-11 ԿՎ հզ.	-	60.0 հազ. դրամ
6. Շարժական բեմահարթակի վարձակալություն 8x6մ. չափի, 1մ. բարձր.		-	500.0 հազ. դրամ
7. Թեմատիկ գովազդային հոլովակ		-	100.0 հազ. դրամ
	<b>Ընդամենը՝</b>		<b>750.0 հազար դրամ</b>

**ԾՐԱԳԻՐ**

**«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված  
«Թատերական օր» ներկայացումների կազմակերպման**

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով քաղաքի ազգաբնակչությանն իրազեկել կազմակերպվող միջոցառման մասին /թեմատիկ գովազդային հոլովակ՝ /30-50 վրկ. տևողությամբ /:
2. Համայնքապետարանի աշխատակիցներին և քաղաքացիներին անվճար տրամադրելու համար ձեռք բերել Վանաձորի Հովհ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի միջին և բարձր տարիքի հանդիսատեսի համար նախատեսված ներկայացման 100 հատ տոմս /ներկայացման ընտրությունը նախապես համաձայնեցնելով Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ/:

3. Համայնքապետարանի աշխատակիցներին և քաղաքացիներին անվճար տրամադրելու համար ձեռք բերել Վանաձորի «Բոհեմ» կամերային թատրոնի մանկական ներկայացման 400 հատ տոմս /ներկայացման ընտրությունը նախապես համաձայնեցնելով Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ/:

4. Համայնքապետարանի աշխատակիցներին և քաղաքացիներին անվճար տրամադրելու համար ձեռք բերել Վանաձորի Տիկնիկային թատրոնի մանկական ներկայացման 400 հատ տոմս /ներկայացման ընտրությունը նախապես համաձայնեցնելով Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ/:

5. Լրատվամիջոցներով լուսարձանել միջոցառումը:

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

**«Վանաձորի օր» տոնակատարությանը նվիրված «Թատերական օր» ներկայացումների կազմակերպման**

- 1. Տիկնիկային թատրոնի տոմսեր 400 հատ - 200.0 հազ. դրամ
  - 2. «Բոհեմ» կամերային թատրոնի տոմսեր 400 հատ - 200.0 հազ. դրամ
  - 3. Հ Արեւյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տոմսեր - 100.0 հազ. դրամ
  - 4. Թեմատիկ գովազդային հոլովակ - 100.0 հազ. դրամ
- Ընդամենը՝ 600.0 հազ. դրամ**

**ԾՐԱԳԻՐ**

*Հրավերով Վանաձոր ժամանած պատվիրակությունների պատվին մշակութային միջոցառումների կազմակերպման*

- 1. *Նախապատրաստել պատվոգրեր 10 հատ /A4 չափի, կավճապատ, ձևավոր թղթով/ և հուշանվերներ /հայկական եկեղեցիների, կամ Արարատ լեռան նկարներով, հայկական խորհրդանշաններով, 30 սմ երկարությամբ, 20 սմ լայնությամբ փայտե կամ տպակաշ/ պատվիրակությունների անդամներին նվիրելու համար:*
- 2. *Կազմակերպել հյուրասիրություն Վանաձոր ժամանած պատվիրակությունների համար: Հյուրասիրությունը կազմակերպել Վանաձոր համայնքի վարչական տարածքում գործող ռեստորաններից մեկում:*
- 3. *Ապահովել գիշերակաց՝ Վանաձոր համայնքի տարածքում գործող հյուրանոցներից որևէ մեկում:*

**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

*Հրավերով Վանաձոր ժամանած պատվիրակությունների պատվին մշակութային միջոցառումների կազմակերպման*

- 1. Պատվոգրեր 10 հատ - 10.0 հազ դրամ
- 2. Հուշանվերներ 10 հատ - 90.0 հազ դրամ
- 3. Հյուրասիրություն 20 մարդ - 200.0 հազ.դրամ

4. Հյուրանոց

4 անձ - 100.0 հազ.դրամ  
Ընդամենը՝ 400.0 հազար դրամ

### ԾՐԱԳԻՐ

Անվանի մարդկանց, հոբեյանական տոների, մեծարման երեկոների,  
շնորհանդեսների կազմակերպման

1. Լրատվամիջոցներով և կայքերի միջոցով քաղաքի ազգաբնակչությանը տեղեկացնել միջոցառման անցկացման մասին: Թեմատիկ գովազդ /30-50 վրկ. տևողության/:
2. Կազմել մեկուկեսժամյա համերգային ծրագիր միջոցառումների կազմակերպման համար, վայրը նախապես համաձայնեցնելով Վանաձորի համայնքապետարանի մշակույթի, կրթության և զբոսաշրջության հարցերի բաժնի հետ:
3. Ապահովել հաղորդավարի ներկայությունը, որի թոկնաձությունը նախապես համաձայնեցնելով Վանաձորի համայնքապետարանի մշակույթի, կրթության և զբոսաշրջության հարցերի բաժնի հետ:
4. Նախապատրաստել, 10 պատվոգիր /A4 չափի, կավճապատ ձևավոր թղթով/ և հուշանվերներ /հայկական խորհրդանշաններով/ արվեստագետներին, գրողներին նվիրելու համար:
5. *Կազմակերպել հյուրասիրություն Վանաձոր ժամանած հյուրերի համար: Հյուրասիրությունը կազմակերպել Վանաձոր համայնքի վարչական տարաքում գործող ռեստորաններից մեկում:*
6. Ձեռք բերել և առաքել 350 հատ /7x21սմ չափի, 300 գր. դիզայների կողմից պատրաստված ձևավոր թղթից/ հրավիրատոմս:
7. Միջոցառումն ապահովել ձանային տեխնիկայով /10-11 ԿՎ հզորությամբ/:
8. Հրավիրել հաղորդավար և երաժշտական օպերատոր, նրանց թեկնաձությունը նախապես համաձայնեցնելով Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:
9. Լրատվամիջոցներով լուսաբանել միջոցառումները:

### ՆԱԽԱՀԱՇԻՎ

Անվանի մարդկանց, հոբեյանական տոների, մեծարման երեկոների,  
շնորհանդեսների կազմակերպման

1. Պատվոգիր	10 հատ	-	10.0 հազ դրամ
2. Երաժշտական օպերատոր	1 անձ	-	20.0 հազ դրամ
3. Հուշանվեր	10 հատ	-	65. 0 հազ դրամ
4. Հյուրասիրություն	15 մարդ	-	150.0 հազ.դրամ

5. Հրավիրատունս	350 հատ	-	105.0 հազ.դրամ
6. Դիզայներ		-	50.0 հազ.դրամ
7. Հաղորդավար		-	30.0 հազ.դրամ
8. Տեխնիկայի վարձակալություն 10-11 ԿՎ		-	60.0 հազ.դրամ
9. Թեմատիկ գովազդային հոլովակ		-	100.0 հազ. դրամ

**Ընդամենը՝ 590.0 հազ. դրամ**

**ԾՐԱԳԻՐ**

**Վանաձոր-Գյումրի մշակութային օրերի կազմակերպման**

1. Ձեռք բերել պայմանավորվածություն Գյումրու համայնքապետարանի մշակույթի բաժնի հետ միջոցառումների անցկացման համար:
2. Ձեռք բերել 150 հատ հրավիրատուներ դիզայների կողմից ձևավորված /7x21 չափի, երկկողմ 300 գ ձևավոր թղթից/ Գյումրիի հանդիսատեսին բաժանելու համար:  
 Ձեռք բերել միջոցառումների իրազեկման մասին 45 հատ ազդագիր /A3 չափի, կավճապատ թղթի վրա գունավոր տպագրությամբ/ Գյումրիում տեսանելի վայրերում փակցնելու համար:
3. Կազմակերպել մշակութային օրերի մասնակից Վանաձորի կոլեկտիվների, անհատ կատարողների Վանաձոր-Գյումրի-Վանաձոր տեղափոխումը: Վարձակալել 1 միկրոավտոբուս /30 նստատեղով/:
4. Կազմակերպել համերգային ծրագիր Վանաձորի կատարողական խմբերի և անհատ ստեղծագործողների մասնակցությամբ, ինչպես նաև Գյումրու համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ համաձայնեցված համերգային ծրագրում ներառել գյումրեցի անհատ ստեղծագործողներին և ստեղծագործական կոլեկտիվներին: Համերգի վայրը ընտրել Վանաձորի և Գյումրու համայնքապետարանների համապատասխան բաժինների հետ համաձայնեցված:
5. Ապահովել հաղորդավարի ներկայությունը:
6. Գյումրի մեկնողների համար կազմակերպել հյուրասիրություն Գյումրու վարչական տարածքում գործող հացատներից մեկում:
7. Ձեռք բերել 5 հատ ծաղկեփունջ /պատրաստված վարդերից, գերբերաններից և կանաչ տերևներից/ և 5 հատ հուշանվեր / կաղնու փայտի կամ ապակու հիմքի վրա փորագրած 30 սմ x 20 սմ չափի, Լռովա կամ Վանաձորի տեսարժան վայրերի պատկերներով/ Գյումրիի համայնքապետարանի մշակույթի բաժնի և մշակույթի գործիչների համար:
8. Ապահովել հաղորդավարի ներկայությունը: Նրա թեկնածությունը նախապես համաձայնեցնել Վանաձորի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ:

## ՆԱԽԱՀԱՇԻՎ

### Վանաձոր-Գյումրի մշակութային օրերի կազմակերպման

1. Հրավիրատուն	150 հատ	-	45.0 հազ.դրամ
2. Ազդագրեր	45 հատ	-	36.0 հազ դրամ
3. Ծաղկեփունջ	5 հատ	-	25.0 հազ.դրամ
4. Հյուրասիրություն	30 անձ	-	204.0 հազ.դրամ
5. Հուշանվեր	5 հատ	-	50.0 հազ.դրամ
6. Միկրոավտոբուս /30 տեղ/	1 հատ	-	40.0 հազ. դրամ
7. Հաղորդավար		-	30.0 հազ. դրամ
<b>Ընդամենը՝</b>			<b>430.0 հազ դրամ</b>

## ԾՐԱԳԻՐ

### Վանաձոր-Ստեփանավան մշակութային օրվա կազմակերպման

1. Լրատվամիջոցների և կայքերի միջոցով քաղաքի բնակչությանն իրազեկել կազմակերպվող միջոցառումների մասին:
2. Ձեռք բերել պայմանանավորվածություն Ստեփանավանի համայնքապետարանի մշակույթի բաժնի հետ միջոցառման անցկացման համար:
3. Ձեռք բերել 100 հատ հրավիրատուներ դիզայների կողմից ձևավորված /7x21 չափի, երկկողմ 300 գ ձևավոր թղթից/ Ստեփանավանի հանդիսատեսին բաժանելու համար
4. Ձեռք բերել միջոցառման իրազեկման մասին /5 հատ ազդագիր A3 չափի, կավճապատ թղթի վրա գունավոր տպագրությամբ/ Ստեփանավանի տեսանելի վայրերում փակցնելու համար:
5. Կազմակերպել մշակութային օրերի մասնակից Վանաձորի կոլեկտիվների, անհատ կատարողների Վանաձոր-Ստեփանավան – Վանաձոր տեղափոխումը: Վարձակալել 1 միկրոավտոբուս /30 նստատեղով/:
6. Կազմակերպել համերգային ծրագիր Վանաձորի կատարողական խմբերի և անհատ ստեղծագործողների մասնակցությամբ, ինչպես նաև Ստեփանավանի համայնքապետարանի համապատասխան բաժնի հետ համաձայնեցված համերգային ծրագրում ներառել գյումրեցի անհատ ստեղծագործողներին և ստեղծագործական կոլեկտիվներին: Համերգի վայրը ընտրել Վանաձորի և Ստեփանավանի համայնքապետարանների համապատասխան բաժինների հետ համաձայնեցված:
7. Ստեփանավան մեկնողների համար կազմակերպել հյուրասիրություն Ստեփանավանի վարչական տարածքում գործող հացատներից մեկում:

